ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մայիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-106-15.04.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մայիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 508 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-106-15.04.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկություններն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Առաջարկում ենք «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում՝

1) օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով.

«**Հոդված 1.** «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-237-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ անհատ ձեռնարկատերը և արտոնագրային վճար վճարողը)» բառերը:».

2) օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի «1)» համարակալումը փոխարինել «1.»-ով.

3) օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով խմբագրվող 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի՝ հետևյալ դրույքաչափերով՝

1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ.

2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայաններ, օդանավակայաններ, երկաթուղային կայարաններ), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսանից մինչև հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ.

3) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգից մինչև քսան Հայաստանի Հանրապետության դրամ.

4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեքից մինչև տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ութ Հայաստանի Հանրապետության դրամ.

5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղ)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգից մինչև տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ.

6) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության

վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում՝ հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով.

7) շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձի կողմից դրա մասին տեղեկացվում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացվելու դեպքում՝ հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով:».

4) օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«2. Օրենքի 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին և 2.2-րդ մասերով.

«2.1. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ:

2.2. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար

վճարելու պարտավորություն ունեցող անձի կողմից դրա մասին տեղեկացվում է համայնքի ղեկավարին։».

5) 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համարակալումը՝ «3)», «4)», «5)», «6)» կետերը համապատասխանաբար փոխարինել «3.» , «4.», «5.», «6.» կետերով.

6) 4-րդ մասում «3-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ» բառերը փոխարինել «3-րդ մասը լրացնել նոր՝ 3-րդ կետով» բառերով.

7) 5-րդ մասից հանել «Օրենքի 14-րդ» բառերը։

Առաջարկում ենք «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում՝

1) օրենքի նախագծի 1-ին հոդվածում «2.1-րդ մասով» բառերը փոխարինել «հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին, 2.2-րդ, 2.3-րդ և 2.4-րդ մասերով.» բառերով.

2) օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 2.1-ին մասի 1-ին կետում «1) Սույն հոդվածով» բառերը փոխարինել «2.2. Սույն հոդվածի 2.1-ին մասով» բառերով և «խախտումը» բառից հետո կետը լրացնել «վարչական տույժ նշանակելու օրվանից հետո» բառերով.

3) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.3-րդ և 2.4-րդ մասերով.

«2.3. Աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձի կողմից համայնքի ղեկավարին շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում) և շինություններից դուրս ծառայությունների մատուցման վայրերում գործունեության տեսակի, ինչպես նաև մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ սխալ տեղեկատվություն ներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում իրավաբանական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով։

2.4. Սույն հոդվածի 2.2-րդ մասով նախատեսված խախտումը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում իրավաբանական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2019 թվականի N 508 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-106-15.04.2019-ՏՏԳԲ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մայիսի 8
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-106-15.04.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ [redacted]
ՕՐԵՆՔԸ

«ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-237-Ն օրենքի (այսուհետ՝Օրենք) 14-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«2. Ոչ բնակելի տարածքներում, այդ թվում՝ հասարակական եւ արտադրական շենքերում եւ (կամ) շինություններում, աղբահանության վճարը սահմանվում է՝ ըստ շինության ընդհանուր մակերեսի հետեւյալ դրույքաչափերով.

1) առեւտրի, հանրային սննդի եւ բնակչության կենցաղային սպասարկման շենքերի եւ շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսունից մինչեւ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ,

2) հյուրանոցների, հյուրանոցային ծառայություններ մատուցող եւ նմանատիպ գործունեություն իրականացնող շենքերի եւ (կամ) շինությունների, առողջապահության համար նախատեսված շենքերի եւ շինությունների, ինչպես նաեւ օդանավակայանների, երկաթուղային կայարանների, ավտոկայանների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեսունից մինչեւ յոթանասուն Հայաստանի Հանրապետության դրամ,

3) արտադրական նպատակային նշանակության շենքերի եւ շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսանից մինչեւ հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

4) վարչակառավարչական, ֆինանսական կազմակերպությունների, տարբեր տիպի գրասենյակների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգից մինչեւ քսան Հայաստանի Հանրապետության դրամ,

5) գիտական, կրթական, ուսումնական նշանակության շենքերի եւ շինությունների, մշակութային, սպորտային եւ նմանատիպ այլ հասարակական շենքերի եւ շինությունների, ինչպես նաեւ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեքից մինչեւ տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ:

6) սույն հոդվածի 2-րդ մասի 1-ից 5-րդ կետերում չներառված գործունեություն իրականացնող շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասից մինչեւ երեսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

7) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է ըստ շինության սեփականատիրոջ կողմից ներկայացված գործունեության տեսակի վերաբերյալ ներկայացված հայտարարության, որին կից ներակայացվում է շինության նշված հատվածի չափագրությունը, իսկ նման հայտարարություն չներկայացնելու դեպքում՝ ամբողջությամբ հաշվարկվում է տնտեսական գործունեության համար սահմանված առավել բաձր դրույքաչափով,

8) շինություններում, (այդ թվում առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ տնտեսական գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում՝ աղբահանության վճարը հաշվարկվում է մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ զրոյից մինչեւ երկու Հայաստանի Հանրապետության դրամ, եթե շինությունում մշտապես

կամ ժամանակավորապես տնտեսական գործունեության չիրականացնելու վերաբերյալ սեփականատիրոջ կողմից ներկայացվել է հայտարարություն:

2) Լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1.-րդ մասով.

«2.1. Շենքերից եւ շինություններից դուրս գտնվող առեւտրի եւ հանրային սննդի օբյեկտների, բնակչության կենցաղային սպասարկման վայրերի եւ ավտոկայատեղերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսունից մինչեւ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ»:

3) 3-րդ մասի՝ «աղբի համար» բառերից հետո լրացնել՝ «,ինչպես նաեւ ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ից 5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում» բառերը:

4) 3-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ.

Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի եւ (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին կամ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

5) Օրենքի 14-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1.-րդ մասով՝

«3.1.Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված շենքերի, շինությունների եւ տարածքների մասով աղբի հեռացման հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող եւ ստացող կողմերի միջեւ կնքված պայմանագրով»:

6) Օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-106՝-15.04.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 06-ի օրենսգրքի 43.1-րդ հոդվածը լրացնել նոր 2.1.-րդ մասով՝

«2.1 Առանց աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրի աղբը տեղափոխելը եւ հեռացնելը (թափելը) կամ պայմանագրով սահմանված վայրից (տեղից) դուրս աղբը հեռացնելը (թափելը)՝ առաջացնում է տուգանքի նշանակում իրավաբանական անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ հարյուրհիսնապատիկի չափով:

1) Սույն հոդվածով նախատեսված խախտումը կրկին անգամ կատարելը մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում իրավաբանական անձի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ» ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքում լրացումների եւ եւ փոփոխությունների կատարումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության ու սանիտարական մաքրման աշխատանքների համակարգված եւ արդյունավետ իրականացման եւ ոլորտի գործառույթների պետական կանոնակարգման անհրաժեշտությամբ:

2.Առաջարկվող կարգավորման բնույթը.

«Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքով առաջարկվող փոփոխությունների պատճառներն են.

1. առկա չեն հստակ օրենսդրական կարգավորումներ, թե որքան աղբահանության վճարներ պետք է վճարվի մի շարք շենքերի եւ շինությունների համար, օրինակ՝ օդանավակայանների, երկաթուղային կայարանների, ավտոկայանների, ավտոկայանատեղիների, ինչպես նաեւ առողջապահության համար նախատեսված նշանակության շենքերի եւ շինությունների աղբահանության:

2. Գործող օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով սահմանվում է. «շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է տնտեսական գործունեության համար սահմանված առավել բարձր դրույքաչափով»: Օրենքը այս տեսքով թողնելը ոչ մրցակցային եւ անարդար պայմաններ է ստեղծում այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնք նույն տարածքում մի քանի տնտեսական գործունեություն են ծավալում, ինչի հետեւանքով տնտեսվարող սուբյեկտները ըստ ամենայնի ոչ թե կվճարեն սահմանված բարձր վարձավճարները, այլ պարզապես կտարանջատեն իրենց բիզնես միավորները՝ ըստ առանձին տնտեսական գործունեության, ինչը նույնպես խնդիր է բիզնեսի համար, քանի որ առաջացնում է լրացուցիչ ֆինանսական բեռ եւ վարչարարություն, այսինքն՝ գործող կարգավորմամբ համայքային բյուջեները չեն ունենա նոր մուտքեր:

3. Օրենքը չի կարգավորվում, թե որքան պետք է լինի աղբահանության վճարը այն շենքերի, շինությունների եւ տարածքների համար, որտեղ տնտեսական գործունեությունը մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, ինչպես նաեւ շենքերից եւ շինություններից դուրս գտնվող առեւտրի եւ հանրային սննդի օբյեկտների, ավտոկայանատեղերի մասով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկա օրենսդրական կարգավորմամբ համայքները չեն կարող որեւէ կերպ ներազդել տնտեսվարող սուբյեկտների վրա, որպեսզի նրանք կնքեն աղբահանության պայմանագրեր, սույն կարգավորմամբ այս խնդիրը ամբողջապես լուծվում է:

Առաջարկվող կարգավորումը

Առաջարկվում է որպես պարտադիր պահանջ սահմանել աղբահանության վճարի հաշվարկումն ըստ առանձին տնտեսական գործունեության տեսակի համար սահմանված դրույքաչափի, բացի այդ հստակեցվում եւ լրացվում են տնտեսական գործունեության տեսակները, ինչպես նաեւ դրվում են հստակ վարչական մեխանիզմներ, որոնք ապահովելու են աղբահանության պայմանագրերի կնքումը:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունումը հնարավորություն կտա որոշակիորեն մեղմել փոքր եւ միջին բիզնեսի ընկած ֆինանսական բեռը, որը նրանք կարող են ուղղել տնտեսական նոր արդյունքի ստեղծմանը, կշարունակենք պահպանել արտադրական գործունեություն ծավալող ընկերություններին պետական աջակցության քաղաքականությունը, տնտեսական գործունեության տեսակների հստակեցումը թույլ կտա խուսափել օրենքի տարաբնույթ մեկնաբանման հնարավորությունից եւ կոռուպցիոն ռիսկերից, ինչպես նաեւ կլինեն հստակ մեխանիզմներ, որոնք թույլ կտան, որպեսզի տեղական ինքնակառավարման մարմինները կարողանան լավագույն կերպով իրականացնել աղբահանության գործընթացը: